# ԿԱՐԾԻՔ

**Դավիթ Վահանի Քարիմյանի «Կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով, Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ**

***Ատենախոսության թեմայի արդիականությունը***

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում ամրագրվել է բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրման վերաբերյալ իշխանությունների քաղաքական որոշումը: Այն իրագործելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում նախատեսվել է կենսաթոշակային բարեփոխումների իրականացում, որոնք պետք է ուղղված լինեն երկու կարևորագույն արդյունքների նվաճմանը՝ 1) կենսաթոշակների չափերի ամենամյա բարձրացում՝ կենսաապահովման նվազագույն զամբյուղին համարժեք միջին աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի չափի ապահովմամբ. 2) պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմամբ անձի եկամտի և կենսաթոշակի չափի միջև կապի հաստատում: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը, ինչպես և անցումային այլ երկրներ, կանգնած է հետևյալ 3 սոցիալ-տնտեսական իրավիճակների առջև՝

1) ժողովրդագրական խնդիրներ («բնակչության ծերացում»),

2) մեծ ծավալների ոչ ֆորմալ տնտեսության առկայություն,

3) եկամուտների արագընթաց վերականգնողական աճ:

Այս խնդիրների ազդեցությունը կենսաթոշակային համակարգի վրա արտահայտվում է ֆինանսական կայունության, կենսաթոշակների ադեկվատության (փոխհատուցման գործակից), ինչպես նաև կենսաթոշակային համակարգը բնութագրող մյուս ցուցանիշների վատթարացմամբ:

2010թ. տարեվերջին՝ դեկտեմբերի 23-ին, ՀՀ Ազգային ժողովն ընդունեց կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների փաթեթը, համաձայն որի նախատեսվեց 2011-ից կիրառել կենսաթոշակի կամավոր կուտակային, իսկ 2014-ից՝ պարտադիր կուտակային համակարգ: Կենսաթոշակային համակարգերի բարեփոխումներն ամբողջ աշխարհում համարվում են բարդ գործ, քանի որ առնչվում են երկրի սոցիալ-տնտեսական բոլոր բնագավառներին: Տարբեր բնագավառներում գործող չափանիշների, սկզբունքների հետ փոփոխությունների է ենթարկվում նաև մարդկանց հոգեբանությունը: Գլոբալ առումով սա լրջագույն բարեփոխում է, ենթադրում է նաև պատրաստվածություն, բոլոր ռիսկերի վերհանում, դրանց գնահատում:

Այսպիսով, նման թեմայի ընտրությունը պայմանավորված է կենսաթոշակային համակարգում իրականացվող բարեփոխումների ժամանակակից հիմնախնդիրներով և ներկա իրավիճակում, սոցիալական կարևոր խնդիրների կարգավորման կարևորությամբ: Ուստի, ատենախոսության թեման արդիական է, քանի որ այն համահունչ է ներկա տնտեսավարման պայմաններին և ուղղված է սոցիալ-տնտեսական քաղաքականության կատարելագործմանը Հայաստանի Հանրապետությունում:

***Ատենախոսության հիմնական բովանդակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը***

Ատենախոսությունում հետազոտության նպատակը ձևակերպված է հստակ՝ բացահայտել պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգերում վճարումների պետական սուբսիդավորման արդյունավետ մեխանիզմների ուղիները և մշակել ՀՀ կապիտալի շուկայում, մասնավորապես՝ ենթակառուցվածքային ծրագրերում կենսաթոշակային ֆոնդերի պահանջվող ներդրումային մեխանիզմներն ու

գործիքակազմը, ապահովելով ֆոնդերի պահանջվող կայունությունն ու եկամտաբերությունը:

Ելնելով նշված նպատակադրումից լուծման են դրվել հետևյալ խնդիրները.

- ՀՀ-ում պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներում վճարումների պետական սուբսիդիվորման արդյունավետ բարեփոխման մեխանիզմների մշակումը:

- ՀՀ ենթակառուցվածքային ծրագրերում կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային մեխանիզմների մշակումն ու զարգացումը:

- ենթակառուցվածքային ՊՄԳ ծրագրերում կենսաթոշակային ֆոնդերի ներդրման գործիքակազմի մշակումը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ներկայացվել են աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և նորույթը, դրանց տեսական ու գործնական նշանակությունը, տեղեկատվական ու մեթոդական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ «Կենսաթոշակային համակարգերի տեսամեթոդբանական հիմքերը և դրանց վերափոխումների միտումները» գլխում ներկայացվել է կենսաթոշակային համակարգի կոնցեպցիայի էվոլյուցիան և Համաշխարհային բանկի բարեփոխումների մեթոդաբանական հիմքերը: Ուսումնասիրվել են նաև կենսաթոշակային ֆոնդերի դերը կապիտալի շուկայի զարգացման գործում:

Ատենախոսության «ՀՀ կենսաթոշակային համակարգի վիճակի համեմատական վերլուծություն»՝ երկրորդ գլխում վեր են հանվել ՀՀ կենսաթոշակային համակարգի իրավական բազայի վերլուծությունն ու իրականացված բարեփոխումների արդյունավետությունը: Միաժամանակ՝ հեղինակի կողմից իրականացվել է ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի կառավարման և համապատասխան ենթակառուցվածքների համեմատական վերլուծություն:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգի ձևավորման կառուցակարգերն ու քաղաքականությունը» գլխում մշակվել են ՀՀ կենսաթոշակային համակարգի ձևավորման հիմնական մոտեցումներն ու հիմնադրույթները, ինչպես նաև պետության կողմից կուտակային ներդրումների սուբսիդավորման կառուցակարգերի ձևավորման առանձնահատկությունները: Միաժամանակ՝ ուսումնասիրվել է ՀՀ կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային քաղաքականության վերակողմնորոշման հիմնադրույթը, ինչն, ըստ էության, թերևս կարևորագույն հետազոտական ուղղությունն է աշխատանքում, ինչպես նաև լուսաբանվել են ակտիվների արժեթղթավորման գծով կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների մատրիցայի հարկային կարգավորման առանձնահատկությունները:

Ատենախոսության կարևոր արժանիքներից մեկն այն է, որ առաջադրված խնդիրների լուծման ընթացքում հեղինակն ստացել է մի շարք գիտական արդյունքներ և որոնցից որպես նորույթ առանձնացնում է հետևյալները.

ա/ Մշակվել է կենսաթոշակային խնայողությունները խթանելու մոտեցում, որը ենթադրում է պետական համաֆինանսավորման պարտադիր կուտակային սխեմայից փուլային փոխանցում կամավորի, և մասնակցի ու նրա գործատուի կողմից մուծումների խթանում կամավոր կենսաթոշակային ապահովագրությանը մասնակցելու պայմանում եկամտահարկի գծով հարկային նվազեցումների սահմանափակումները վերացնելով:

բ/ Մշակվել է պետական-մասնավոր համագործակցության ենթակառուցվածքային ներդրումային նախագծերում կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ներդրման մեխանիզմ, որը նախատեսում է ակտիվների արժեթղթավորում՝ օգտագործելով համապատասխան սպասարկման գործիքներ:

գ/ Մեխանիզմներ են մշակվել կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների հարկային կարգավորման՝ պետական և մասնավոր համագործակցության համար ակտիվների արժեթղթավորման միջոցով՝ հիմնված միջազգայնորեն ընդունված «հարկային չեզոքության» և արժեթղթավորման գործարքների տրանսֆերային գնագոյացման կարգավորման չափանիշների վրա:

Ատենախոսության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական և գործնական նշանակություն: Մասնավորապես դրանք կարող են օգտագործվել այդ գործընթացում ժամանակակից մեխանիզմների, գործիքների ներդրմանն ուղղված ուսումնասիրություններում և գործնական ծրագրերում, ինչպես նաև տվյալ ոլորտի մասնագետների ու աշխատակիցների կողմից:

***Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ***

Գրախոսվող ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ ունի նաև որոշակի թերություններ, որոնցից կցանկանայինք առանձնացնել հետևյալները.

1. Մինչև վերջերս Հայաստանի կենսաթոշակային ապահովության ոլորտում գործող համակարգը եղել է բաշխողական: Ներկայումս պետությունը կենսաթոշակային համակարգի բարեփոխումների միջոցով փորձում է կատարելագործել կուտակային կենսաթոշակային համակարգը, ինչի արդյունքում պետք է տեղի ունենա կապիտալի կուտակում և, որ ամենակարևորն է՝ ֆինանսական շուկաների զարգացում: Սակայն ինչպես վկայում են կատարված հետազոտությունները, առ այսօր ֆինանսական, և առաջին հերթին՝ կապիտալի շուկայի առանձնակի զարգացում չկա: Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը ատենախոսությունում անդրադառնար այս հիմնախնդրին և նախանշեր որոշակի կառուցակարգեր, որոնք կնպաստեին վերոհիշյալ հիմնախնդրի լուծմանը, հակառակ պարագայում կուտակային կենսաթոշակային համակարգի ստեղծումը կդիտարկվի որպես ինքնանպատակ գործունեություն:

2. Համաշխարհային պրակտիկայում կուտակային կենսաթոշակային ակտիվների կառավարումը կյանքի ապահովագրության ոլորտում գործող ապահովագրական ընկերությունների առավել պահանջված ապրանքատեսակն է և հաշվի առնելով, որ կենսաթոշակային ապահովագրությունը մտնում է կյանքի ապահովագրության տեսակի մեջ, ցանկալի կլիներ աշխատանքում հեղինակն առավել հանգամանորեն անդրադարձ կատարեր այս հիմնախնդրին, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում

2007թ. ապահովագրության մասին նոր օրենքի ընդունումից հետո ապահովագրական ընկերությունները հանձնեցին կյանքի ապահովագրության իրենց արտոնագրերը: Այսինքն, միևնույն ընկերությունը չի կարող միաժամանակ տրամադրել երկու տեսակի՝ կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն:

3. Նորույթի 3-րդ կետի համաձայն հեղինակն առաջարկում է մշակվել որոշակի կառուցակարգեր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների հարկային կարգավորման՝ պետական և մասնավոր համագործակցության համար ակտիվների արժեթղթավորման միջոցով՝ հիմնված միջազգայնորեն ընդունված «հարկային չեզոքության» և արժեթղթավորման գործարքների տրանսֆերային գնագոյացման կարգավորման չափանիշների վրա: Առաջարկությունն, իրոք, արժեքավոր է վերջինիս իրագործման դեպքում, սակայն նշված առաջարկությունն ավելի կշահեր, եթե հեղինակը առավել կոնկրետացներ արժեթղթավորման գործարքների տրանսֆերային գնագոյացման կարգավորման չափանիշները:

4. Վիճահարույց է 152 էջում հեղինակի այն կարծիքը, որ ժամանակակից պայմաններում և մոտ ապագայում կենսաթոշակային ֆոնդերը չեն ունենա իրացվելիության ռիսկ: Համաշխարհային ֆինանսական շումաները ներկայումս աչքի են ընկնում անկանխատեսելիությամբ, տոկոսադրույքների թռիչքաձև և անկանոն տատանումներով, և նմանատիպ պայմաններում իրացվելիության ռիսկը մշտապես առկա է: Խոսքը առաջին հերթին վերաբերում է իրացվելիության բացասական ճեղքվածքների առաջացմանը:

5. Ատենախոսությունում և սեղմագրում առկա են նաև տեխնիկական բնույթի թերացումներ և անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հավելվածներն անհրաժեշտ էր ներկայացնել նոր համարակալմամբ, առանձին տեղերում հանդիպում են նաև շարահյուսական բնույթի անճշտություններ:

***Եզրակացություն***

Վերը նշված դիտողությունները սկզբունքորեն չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները և արդյունքները:

Դավիթ Վահանի Քարիմյանի ատենախոսությունն ինքնուրույն ու ամբողջական, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, իսկ արված առաջարկությունները կարող են էական դեր ունենալ ՀՀ-ում կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի հետագա կատարելագործման, այդ գործընթացում ժամանակակից մեխանիզմների, գործիքների ներդրմանն ուղղված ուսումնասիրություններում և գործնական ծրագրերի իրականացման գործում:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Դավիթ Վահանի Քարիմյանի «**Կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում**» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու Խ.Ա.Մխիթարյան

Խորեն Ալբերտի Մխիթարյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտքարտուղար՝ Ն.Հ.Դարբինյան
16.06.2022թ.